

# Ս. ՆԵԶԱՐԵՄՆԻ ՆԵՄԱԿԸ Մ. ՆԵԼԲԱՆԴԵՄՆԻՆ

(Հաղորդեց Ե. Շահազիզ)

25 ին սեպտ. 1865. Մոսկվա.

Որովհետև իմ պաշտօնի պալմանեալ տարիքը մօտ լինելով իւրեանց լրանալուն, ցանկալի էր ինձ թեթեւացնել իմ անձը այս և այն նիւթական ծանրութիւնից, որովհետև տակաւին երկրալութեան տակ է իմ աւելի երկար մնալը, կամ թէ չմնալը Մոսկուայի մէջ, վասն որոյ ես արժան համարեցի որպէս և իցէ վաճառել իմ տունը, և արդէն վաճառեցի, թէպէտ կը մընամ այստեղ մինչև հոկտ. 10—12։ Այս առաջին բեռն էր, որ թափեցի վերալից։ մնում էր ինձ այսուհետեւ մեր անբաղդ Հիւսիսափալլի մնացած տետրակների հոգաբար, բայց և դորանից մի մասը առատաձեռն ձրի պարգևատրութեամբ սորան և նօրան բաժանեցի։ Բայց գեռ բաւական շատ մնում է ինձ, որ ես յուս ունիմ մի օր անձամբ տնձին յանձնել մեր հայկական սերունդին, եթէ Աստուած կը լաջողէր իմ կամիլը և առնելը։ Ձեզ յայտնի կը լինի, որ դուք շատ ու շատ տարիներից յառաջ իմ մօտ դրած ունիք մի չեմօդան՝ ամենսին լեքը, թէ ինչ թղթերով կամ գրքերով —, ինձ անյալու է, որովհետև ինչպէս կապած ու կաշկանդած յանձնել էք ինձ, այնպէս էլ ողջ և առողջ ձգած կալ այնտեղ. կայ նոյնպէս Ձեր վաղաբաղդ Ելմեն Սիւի թափառական հրեայի թարգմանութեան օրինակները, և բաւական բազմաթիւ։ Մի քանիքը դոցանից ես բաշխել եմ սորան և նօրան, իմ յատուկ թեթևանալուս համար։ Զկարծեմ թէ սորա վերալ դուք բարկանաք, որովհետև աւելի լաւ եմ համարել Ձեր հոգու վաստակքը մարդու ձեռք անցուցանել, քան թէ մկների և ակիսների ապակա նութեան տակ ձգել։

Իմ ալժմեան թախանձագին իսդիրս Զեզանից այն է, որ. Հոգաբարձութիւն գործէք Զեր սեփականութիւնը—չէմողանը և թէ Ելտեն Սիւի թարգմանութեան օրինակները—որոց ձեռամբ Զեզ հաճոյ կըլինի, առնուլ տալու իմ մօտից և տնտեսելու որպէս կամիք, որովհետեւ գոցա մնալը ինձ մօտ պիտի պատճառէր ինձ մեծ ծանրութիւն օտար վարձու բռնած տների մէջ, մանաւանդ որ ես մեր լատուկ ունեցած արկղներից, պահարաններից, զրեբրից, կարսսիքներից նեղացած եմ, ըստ որում մարդ չը գիտէ, թէ ուր պարտակէ ալդքան նիւթերի բազմութիւնը: Քանի որ իմ տանս էի, մի կերպով ամփոփում էինք դորան, բայց ալսուհետեւ օտար տների մէջ բնակելով, մեր լատուկ նիւթեղէնի համար գծուար թէ գտանելու ենք հարկաւոր տարածութիւնը, և դու գիտես Մոսկուալի վարձու բնակութիւնների պայմանքը:

Ինչ գրեմ Զեզ Մոսկուալից. իմ կեանքս շատ միատեսակ անցանում է ընտանեկան աշխատութիւնների, Հոգսերի և տառապանքի մէջ. օրը մի ժամ պարապած եմ ինստիտուտում: Ընկերական կեանք չկալ և եղած չէ երբէք, բացի մին ու կէս բարեկամից և ծանօթից, որ կարող էի տեսանել իմ տանս: Կատկովի գրուածքը Թիֆլիսեան անցքի վերալ և նորա պտտամխանը Թիֆլիսից կարգացած կլինիս: Կատկովը մի բանով զինաթափ է կացուցանում մտածողի գատապարտող դատաստանը՝ նորա վերալ, ալսինքն նորանով, որ ընդունել է իւր լիմարասկան և վայրիվերու գլածների խելացի. և հիմնաւոր պատասխանքը: Արդարեւ ցաւելի է, որ մի Կատկովի պէս վեգոմօստագէր պիտի իւր կարող ազգեցութեամբ աղաւաղէ հասարակաց կարծիքը, տալով ժողովրդին չգիտես որ տեսակ անձունի կարծիքներ և հայեացք, և այս' ալնպիսիներ, որ աւելի նախատինք էին մի զօրաւոր տէրութեան, քան թէ փառք: Բայց Կատկովը շատ փոքրոգի մարդ է. ինքը սաստիկ երկիւղ ունի հայերից, վրացիներից, թաթարներից. մի գուցէ գոքա մի օր բարձրացնէին իւրեանց ազատ թադաւորութեան դրօշը: Ողորմելին, չգիտէ, որ եթէ ալդ տգէտ և թոյլ ազգերին թագաւորութիւն ևս բաշխէիր, ին-

քեանք սկիտի իսկոյն հրաժարուէին դոցանից, կամ եթէ լիմարութեամբ յանձն առնուին, ինքեանք պիտի միմեանց միս ուտէին, ինքեանք իւրեանց գազանական զէնքով և անմիսբանութեամբ կործանէին իւրեանց անձը: Ինչ և իցէ, մենք ունինք ուրախութեան տեղիք, որ վերջապէս ճշմարտութիւնը յաղթող եղաւ: Սատակեցաւ և Ալվազը, բայց մեռաւ և կաթողիկոսը, առանց տօնախմբելու իւր յաղթութեան աօնը, որ Կալսերական հրամանով պատրաստուած էր նորան: Որպէս կընթանան՝ Հայք ալսուհետեւ, որպիսի կաթողիկոս կընտրեն իւրեանց համար, ես ոչինչ յուսալու չունիմ դորանից, որովհետև մի ընտրութիւն, առանց ստոյգ վերահսութեան ընտրելի անձին արժանաւորութեան— ինչպէս միշտ եղած է մեր ազգի մէջ և կինի—երբէք կարող չէ մի բարի հետևանք ունենալ, բայց ընտրողը տէրութիւնն է ազգի քամակում և ազգի անունով. արնուհետև ինձ ու քեզ ինչ: Ես իմ կարծիքս ալս խնդրի մասին գրեցի Թիֆլիս մի քանի մօտ բարեկամների:

Մինչև 11 Հոկտ. Զեր նամակը գտանելու է ինձ իմ հասցէով:  
Զեր անփոփոխ բարեկամ  
Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑ

ՆԱՅՈԹ. Այս նամակը մենք ստացել ենք Նալբանդեանցի քրոջ որդի պլ. Յովհաննէս Խաչատրեանից հանգուցեալի շատ ուղիւ թղթերի հետ միասին, որոնց մասին մենք քանիցս առիթ ենք ունեցել յիշելու մեր Նալբանդեանցին վերաբերեալ գրուածների ծանօթութիւնների մէջ:

Այս նամակը կարենոր է մեզ համար, բացի իւր հետաքրքրական բովանդակութիւնից, և նորանով, որ ուղղուած է Նալբանդեանցին և ցոյց է տալիս այն բարեկամութիւնը, որ եղել է «Հիւսիսափայլ» այդ երկու գլխաւոր աշխատակիցների մէջ և որ այդ բարեկամութիւնը մնացել է նոցա մէջ անփոփոխ մինչև վերջ:

Մեր ձեռքին եղածը նամակի բնագիրը չէ, այլ պատճէնը և այն էլ ընդօրինակուած մի անգրագէտ մարդու ձեռքով, ուստի և լի է տառասիսաներով և կէտադրական վրիպանքներով, որոց կարևորները մենք ստիպուած եղանք ուղղել:

Ե. ՇԱՀԱԶԻՋ